«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստման
դասընթաց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Պատկերավորման արվեստը
Համո Սահյանի պոեզիայում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ավագյան

Ուսումնական հաստատություն՝ «Չարենցավանի N 2 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն. Սահյանի քնարերգության առանձնահատկությունները
2. Գեղագիտական ըմբռնումները
3. Բնությունը Սահյանի պոեզիայում
4. Պատկերավորման արվեստը և միջոցները
5. Մակդիր
6. Համեմատություն
7. Փոխաբերություն
8. Անձնավորում
9. Չափազանցություն և նվազաբերություն
10. Հակադրություն
11.Կրկնություն
12. Աստիճանավորում
13. Այլաբանություն
14.Հնչյունախաղ
15.Երգիծանք
16. Գույնի զգացողություն
17. Բույրի զգացողություն
18. Ժողովրդական լեզվամտածողություն, ոճեր, դարձվածքներ
19. Վերջաբան
20. Եզրակացություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իմ ամեն մի տողը զսպված մի տարերք է,
Ձարկերակի զարկ է և արյունի եռք է…

Սահյանի մուտքը հայ գրականություն շռինդով չեղավ, նա մտավ անաղմուկ, կամացուկ, բայց և հասկացրեց աշխարհին, որ եկել է ինքը՝ <<ամենամիակը>> և <<ամենաեսը>>: Եկել է՝ բացահայտվելու, գտնելու ինքն իրեն, եկել է՝ դառնալու <<քարափների դեսպան>>, դառնալու <<փոքրիկ մեծություն>>, <<մայր բնության աչք ու ականջը>>:

Ասում են՝ երբ թնդանոթները որոտում են, մուսաները լռում են: Համո Սահյանի պարագայում ուրիշ բան ստացվեց. որոտացող թնդանոթներին զուգահեռ լսվեց և Սահյանի ձայնը:

Սկզբնական շրջանում Սահյանը դժբախտություն ունեցավ ստեղծագործել անհատի պաշտամունքի տարիներին, տարիներ, որոնք իրենց սև դրոշմը դրեցին նաև Սահյանի վրա. «Հրատարակել եմ բանաստեղծությունների ութ ժողովածուներ, որոնցից երեքի համար ամաչում եմ՝ «Առագաստ», «Սլացքի մեջ», «Ծիածանը տափաստանում»: Մյուսների համար՝ առաժմ ոչ: Թվածս ժողովածուները թերևս կատարել են դատարկ տակառների դերը, որ հին ծովայինները պահում էին առագաստանավի տախտակամածներին կետերի բերանը գցելու համար, որոնք սպառնում էին կուլ տալ ամբողջ նավն իր անձնակազմով: Անհատի պաշտամունքի տարիներին անխուսափելի էին նման տակառները: Հիմա, երբ վտանգն անցել է, բեռնաթափվում ենք այդ տակառներից»: Փաստորեն ժամանակները ստիպում էին, և համարյա ոչ ոք չէր կարող խուսափել պաշտամունքին տուրք տալուց: Այսպես է եղել շատերի հետ: Այս հոսանքի մեջ ընկավ և Համո Սահյանը: Նա ստիպված եղավ զգալ մի բան, արտահայտել հակառակը, և այդ տարիների բռնադատված գոյության և բանաստեղծական ներքին ձայնի ստիպողական խլացման մասին է նա հետագայում գրում.

Ախ, ինձ ծլել չթողին,

էլ ուր մնաց կանաչել,
Ծանոթանալ չթողին,
էլ ուր մնաց ճանաչել:

Սովորական մահկանացուի և Սահյանի աչքերի միջև կա ահռելի տարբերություն: Աչք ես նկատի չունեմ կոնկրետ օրգանը, այլ այն, թե ինչպես է տեսնում Սահյանը, և ինչպես է տեսնում սովորական մարդը: Նրա մոտ <<արևը կարող է հոտ ունենալ>>, <<առուն կարող է ուշաթափվել>>, <<տերևները կարող են պահմտոցի խաղալ>>, <<քամին կարող է փշաքաղվել>>, <<թարթիչներից կարող են լեռներ կախվել>>, <<ծաղիկները կարող են թռչել>>, <<մողեսները կարող են սիրահարվել>>: Փաստորեն Սահյանի ամենամեծ առանձնահատկությունն այն է, որ նա գտել է պատկերներով մտածելու գաղտնիքը:

Սահյանն իրեն համարում էր <<գիժ>> բանաստեղծ: Եվ իր այս տարօրինակ ինքնագնահատումը նա հաստատում էր իր համար ճշամարտություն դարձած տողերով. <<Մինչև 18 տարեկանը բոլորը բանաստեղծ են, 18-30 բանաստեղծներն են բանաստեղծ, 30-ից հետո գժերն են բանաստեղծ>>[1]: Նա զուգահեռներ է անցկացնում իր և… <<Երեխաները, խենթերը և բանաստեղծները միևնույն ձևով են մտածում>>: Փաստորեն բանաստեղծ լինելուց առաջ կարևորագույն պայման է երեխա լինել, մի խենթ երեխա…

Երանի նրան, ով մեծացել է
Ու երեխա է մնացել դեռ…

Սահյանն իր աշխատանքին վերաբերվում էր երկյուղածությամբ, նրա համար պոեզիան սուրբ տաճար մտնելու նման մի բան է, թվում է նույնիսկ, թե Սահյանը բանաստեղծության առջև կարող է մոմը ձեռքին ծնրադրել. «Բանաստեղծությունը նախքան թղթին հանձնելը ես մտքումս գրած եմ լինում: Եվ եթե որևէ բառ, որևէ արտահայտություն է պակասում, գրի չեմ առնում: Ես սպիտակ թղթից վախենում եմ: Ո՞վ է մեզ իրավունք տվել նրա մաքրախորհուրդ չգրվածությունը խախտել: Մեկ էլ մի բանից եմ վախենում՝ գրելու ընթացքի հեշտանալուց: Հանկարծ ու գրելը արհեստական չդառնա: Հանկարծ սուտը չմտնի բանաստեղծության մեջ>>[2] : Ընդհանրապես սպիտակ, չգրված թուղթը Սահյանի համար ինչ-որ խորհուրդ ունեցել է, նա նույնիսկ երկմտանքի պահեր է ունեցել. «Նայում եմ մաքուր էջին և տեսնում եմ մի սպիտակ անհունություն: Կարո՞ղ եմ այդ անհունությունը լցնել ինձնով»:

---

[1] Հրանտ Մաթևոսյանի հետ կայացած զրույց / Հանրային հեռուստաընկերություն/
[2] Լևոն Մկրտչյան, <<Զրույցներ բանաստեղծի հետ>>

Սահյանն աստվածային երկյուղածությամբ է լցված ոչ միայն մաքուր էջի, թղթի նկատմամբ, այլև իր ստեղծած յուրաքանչյուր տողի, գրքի նկատմամբ: Նրա համար իր գրքերն իր հարազատ զավակներն են իրենց առավելություններով և թերություններով: Համալսարանի ուսանողների հետ մի հանդիպման ժամանակ այն հարցին, թե ինչ զգացմունքներ է ունենում, երբ լույս է տեսնում իր գիրքը, Սահյանը պատասխանել է այսպես. <<Ինձ այնպես է թվում, թե ես կողոպտված եմ: Տունս դատարկ է, նստելու տեղ չկա, քնելու տեղ չկա, այլևս հնարավոր չէ ապրել…>>:

Քանի որ Սահյանը բանաստեղծությունից դուրս իրեն չի պատկերացնում, բնականաբար բանաստեղծություններ գրում է, որովհետև չի կարող չգրել: Մինչև անգամ երբ չի կարողանում գրել, գրում է, թե չի կարող գրել.

Այս էլ քանի ամիս
Տողերը չեն խայտում,
Հանգերը չեն գալիս,
Բառերը չեն պայթում.
Հարսանիքն է մահիս:

Սահյանը գրում է, որովհետև նրան անհրաժեշտ է ընթերցողի հետ շփվել, իր տխրություններն ու ուրախությունները կիսել նրա հետ, որովհետև նա ցանկանում է տեսնել աշխարհը, տեսնել ինքն իրեն, իսկ դա հնարավոր է առաջին հերթին պոեզիայի միջոցով:

Եվ ի վերջո Սահյանը գրում է, որովհետև նրան հարկավոր է հուշն ու երազանքը ծանրութեթև անել, ուրիշներին՝ իր և իրեն ուրիշների մեջ փնտրել, սիրտն ու միտքը մի հարկի տակ գրանցել, կորցրածը գտնել և գտածը բաժանել, իրեն իրագործել և իր գոյությունն արդարացնել:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Սահյանի գեղագիտության ուժեղ կողմերից մեկը գեղեցիկի զգացողությունն է: Որպես բարձր ճաշակով օժտված բանաստեղծ՝ նա կիսակատար գործ չի ընդունում: Սահյանը գիտի, որ կատարելությունը սահմաններ չի ճանաչում, այդ պատճառով էլ նա միշտ առաջ է նայում՝ համոզված լինելով, որ բանաստեղծությունը հավերժ է:

Բանաստեղծությու՛ն
Դու եղել ես, կաս և պիտի լինես,

Ինչ էլ որ լինի…

Սահյանի համար պոեզիան կյանքի է կոչվել իր նպատակով, և այդ նպատակը «մարդուն ազնվացնելը, գեղեցկացնելն է»: Սահյանը կատարում է մարդկանց տարբերակում հետևյալ սկզբունքով՝ մեկը նայում է ծառին , մտածում է՝ ինչքան բերք կտա, բերքը ինչքան եկամուտ կտա, իսկ մյուսը մտածում է՝ ինչքան գեղեցիկ է: Աշխարհը պետք է սրանով ապրի: Աշխարհին գեղեցկություն է պետք, իսկ Սահյանի հոգում ապրում է այդ զգացողությունը.

Աստղերից կախված օրորվում էինք,
Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու…

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

<< Չեմ հիշում, թե ով է Տոլստոյի <<Խոլստամեր>> պատմվածքը կարդալուց հետո ասել, **թե իրեն այնպես է թվում, թե Տոլստոյը ինչ-որ ժամանակ ձի է եղել>>**[3] **: Համո Սահյանին** կարդալիս քեզ թվում է, թե Սահյանն ինչ-որ ժամանակ բնություն է եղել, եղել է քարափ, ջրվեժ, երկինք, լեռ… Բնությունը դարձել է Սահյանի երկրորդ կեսը, նրա հարազատն ու մտերիմը.

Եթե դու երբևէ այս քարափին նայես,
Չկասկածես երբեք, որ ես նա եմ, նա՝ ես:

Գուրգեն Մահարին Սահյանի և բնության կապը տեսել է ուրույն ձևով. <<Համո Սահյանի գրչի տակ բնության երևույթները դառնում են <<բնավորություններ>> և <<կերպարներ>>[4]: Ըստ Սահյանի՝ գոյություն ունի կարոտ մարդու և բնության միջև. <<Ոչ միայն մարդն է կարոտում բնությանը, այլև բնությունն է կարոտում մարդուն: Ես այդ մասին գրել եմ>>: Մարդու և բնության փոխներթափանցումը, ըստ Սահյանի, Գյոթեի այն մտքի ցոլացումն է, որ մարդը ինքնաճանաչման մակարդակին հասած բնությունն է.

Օգնիր ինձ իմանամ, ինձ քեզանից զատեմ ու խառնվեմ քեզ հետ:

---

[3] Շ. Խաչատրյան, <<Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ>>

[4] Գրական թերթ, 1959 թ., համար 7, Գուրգեն Մահարի, <<Գրական նամականի>>

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

<<Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ իրապես, քերթվածներն իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն զորությունը>>[5] : Այսպիսի զգացողություն ունի նաև Սահյանը, և այս զգացողությանն է նա պարտական արվեստի մեջ իր մեծ ավանդն ունենալու համար: Պատկերավորման համարյա բոլոր միջոցներն իրենց նշանակությունն ունեցան Սահյանի պոեզիայում, նշանավորվեցին իրենց բոլոր նրբերանգներով:

ՄԱԿԴԻՐ

<<Մակդիրները սիրուհիների նման են: Հարկավոր է նրանք փոխել: Հիմա մշտական մակդիրների ժամանակը չէ>>[6] :

Ընդհանրապես գեղարվեստական խոսքում պատկերավորման միջոցներից ամենաշատ գործածվողը մակդիրն է, և գեղարվեստական խոսքը պատկերացնել առանց մակդիրների հնարավոր չէ:

Կան և եղել են բանաստեղծներ, որոնք իրենց երկերը հեղեղել են մակդիրներով, որոնց կուտակումը, անպայման մակդիրներով խոսելու ճիգը, գեղեցկազարդման տենչը ոճը դարձնում են անկենդան ու արհեստական: Սահյանը, խուսափելով մակդիրների կուտակումից, ոճը դարձնում է սեղմ, դիպուկ և բնական՝ ամեն մի տեղին օգտագործվող մակդիր դարձնելով պատկեր, պատկերավոր մտածողություն:

Ուր գնացին խեղճ ու կրակ, ոտաբոբիկ տարիներս,
Իմ թևավոր, իմ թևաբեկ տարիներս:

Համաշխարհային ճանաչում գտած կոլումբիացի գրող Գաբրիել Գարսիա Մարկեսը տվել է յուրօրինակ մեկնաբանություն մակդիրի դերի և նշանակության մասին. <<Ինձ համար ամենամեծ դժվարությունը ածականն է, ածականի տեղը, և դրանից է կախված, թե այսինչ գրվածքը պատկանում է, թե չի պատկանում գրականությանը: Ածականն այն է, որ զանազանում է մի գրողին մյուսից, դա իրականությունը տեսնելու նրա եղանակն է, գույնը, ձայնը>>:

---

[5] Միսաք Մեծարենց, <<Ինքնադատության փորձ մը>>
[6] Լևոն Մկրտչյան, <<Պոեզիան կօգնի մարդուն>>

Սահյանի համար մակդիրն ունեցել է իր ուրույն նշանակությունը, և նա կարողացել է դիպուկ օգտագործել այն.

Ինչ է ուզում ինձնից այս կատաղած քամին,
Այս ծաղրածու քամին, լարախաղաց քամին,
Մի մեծ, մի լավ աշուն տարած-թաղած քամին:
Թող գա այգուս խշշուն խաշամն առնի գնա
Փռչակալած, փոշոտ, փշաքաղված քամին:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Համեմատությունները կազմում են Սահյանի օգտագործած պատկերավորման միջոցների գերակշիռ մասը.

Ձով արա նրա կյանքին, հոր նման գգվիր անքուն…
<<Նաիրյան դալար բարդի>>
Մերթ փարվում ես հովի պես, մերթ հողմի պես ինձ չարչարում…
<<Փնտրում ես դու>>
Քարի պես պինդ եմ, հողի պես փխրուն…
<<Ինչ արած, մարդ եմ>>

Բանաստեղծություններից մեկը՝ <<Ձրի պես>>, համեմատության մի ամբողջական պատկեր է, այդ է հուշում և բանաստեղծության խորագիրը.

Կռիվ տայի անդադար ու փրփրեի ջրի պես,
Թափառեի քարեքար, քար փշրեի քարի պես,
Լվանայի քեզ, աշխարհ ու մաքրեի ջրի պես:
Քչքչայի սարն ի վար, մարգ ջրեի ջրի պես[7]:

Սահյանի օգտագործած համեմատությունները խճողված, բարդ չեն, այլ պարզ և հասկանալի: Նա համեմատությունը կարողացել է օգտագործել մտածված, որպեսզի բնութագրի երևույթի էությունը:

Կայմ ու կողերը ջարդված, անառագաստ ու անղեկ
Եվ անդրոշ նավի պես ինձ բաց թողեք՝ ես գնամ:

[7] Համո Սահյան, Երկեր 2 հատորով, Սովետական գրող, Երևան, 1984 թ.

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արիստոտելը, նշելով փոխաբերության բացառիկ կարևորությունը վեհ, գեղեցիկ խոսք ստեղծելու գործում, հաջողված փոխաբերություն ստեղծելը գրողի անհատականության, տաղանդի չափանիշ է համարում. <<Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկարել առարկաների նմանությունը>>[8] :

Փոխաբերությունն իր մեծ նշանակությունն ունեցավ Սահյանի պոեզիայում, այնքան մեծ, որ Սահյանն իրավամբ համարվեց փոխաբերության մեծ վարպետ.

Ամառվա բաց երկնքից ձյուն մաղեց մորս ծամին:
Սև լուրեր եկան կռվից ու կանաչ-կարմիր հավատ:

Սահյանն այն վարպետության է հասել, որ համարյա թե յուրաքանչյուր բառ կարողացել է դարձնել փոխաբերություն և բառին հաղորդել գույն, ռիթմ, շարժում.

Երկինքը ձորն է մտել, ցոլքը ցողոտ է:
Գիրկ ու ծոցը ծիծառոտ, փեշքը հողոտ է:

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ

Համո Սահյանի օգտագործած պատկերավորման միջոցները եթե դնենք աստիճանական սանդղակի վրա, աներկբայելի է, որ նա ամենաշատը օգտագործում է անձնավորումը.

Ձկնիկն առվին խուտուտ տվեց և առուն պարզ ու անբիծ
Քրքջալով ուշաթափվեց ու ձորն ընկավ քարափից…
Ձարկվեց քարին, ուշքի եկավ, շուրջը նայեց կասկածով
Եվ մի կապույտ ժպիտ շուրթին ճամփա ընկավ դեպի ծով:

Սահյանն անձնավորման այնպիսի ուժեղ պատկերներ է ստեղծում, այնպիսի վարպետությամբ է անկենդան առարկաներին շունչ ու հոգի տալիս, որ թվում է, թե մեր շուրջը շնչում, ապրում է ամեն ինչ՝ քարը, ջրվեժը, ձորը և նույնիսկ մահը.

Ուշաթափվել է ջրվեժը ձորում,
Քարափի գլխից ընկել է ներքև:
Ձեր գլուխները մի տարուբերեք,
Հաղարջի, հոնի, մի քիչ համբերեք:

---

[8] Արիստոտել, <<Պոետիկա>>

ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ և ՆՎԱԶԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Չափազանցության օրինակները շատ են Սահյանի պոեզիայում, նրա երևակայությունը ընդունակ է անկանխատեսելի թռիչքների.

Օրն էլ է փախել օրվա ճիչերից:

Լեռներ են կախվել իմ շրթունքներից:

Ըստ էության՝ նվազաբերությունն ունի արտահայտչական նույն արժեքը, ինչ չափազանցությունը.

Մի ծվեն ծիծաղ, հույսի մի պատառ,

Հոշոտված մի շող, ամպոտված մի ծիլ…

Չափազանցությունը և նվազաբերությունը երբեմն հանդիպում են միասին: Այս սկզբունքով է կառուցված <<Ես հարուստ էի>> բանաստեղծությունը.

Ես հարուստ էի: Ես կարող էի իմ վերհուշերի անհուն պաշարով

Գնել աշխարհի ծովերը բոլոր ու տալ քեզ նվեր,

Բայց դու ծովերի կարիք չունեիր, քեզ հարկավոր էր լոկ մի հայելի

Մազերիդ վրա մատներիս մեղքը տեսնելու համար:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դու հողածին, դու և աստված, դու և հաղթող, դու և պարտված,

Դու անտակ վիհ, դու և բարձունք, դու և ժպիտ, դու և արցունք:

Մարդը՝ գրականության հիմնական առարկան, ինքնին հակադրությունների ամբողջություն է՝ ազնիվ ու խարդախ, կեղծ ու շիտակ, չար ու բարի, նուրբ ու կոպիտ, միամիտ ու խորամանկ, ստեղծող ու կործանող, և Սահյանն ինքն էլ է խոստովանում իր, ասել է, թե մարդու՝ հակադրություններով լեցուն լինելը.

Մերթ ոտից գլուխ զարդեր եմ հագնում,

Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,

Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոպան,

Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ:

Սահյանն իրավունք ունի Ուիթմենի նման ասել. <<Ես բավականաչափ տեղ ունեմ իմ մեջ հակասություններ տեղավորելու համար>>:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Կրկնությունները ստեղծագործական նախասիրություն են Սահյանի բանաստեղծություններում, այնքան տարածված, որ անհնար է պատկերացնել նրա ստեղծագործությունը առանց բավականին նուրբ և վարպետ կրկնությունների: Կրկնության արվեստը հին է և արմատներով գնում է դեպի դարերի խորքը: Սահյանի պոեզիայում կրկնութան տեսակներից ամենամեծ թիվը կազմում են հարակրկնությունները.

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա…

Սահյանն ունի բանաստեղծություններ, որտեղ կան կրկնության երեք տեսակները՝ հարակրկնություն, ներքին հանգ և վերջույթ.

Եվ դու լիանաս ինքդ քեզանով,
Եվ դու զարմանաս ինքդ քեզանով,
Եվ դու թարմանաս ինքդ քեզանով…

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄ

Գեղարվեստական խոսքի արտահայտչականությանը մեծապես նպաստում է աստիճանավորումը: Սահյանի «Ներշնչանքի պահ» կոչվող փոքրիկ բանաստեղծությունը, որը բաղկացած է ընդամենը չորս տողից, ամբողջովին աստիճանավորման օինակ է, և այստեղ մի տեսակ շարժում է երևում.

Խավարը շարժվեց: Բան չի երևում,
Ձիգզագվեց հանկարծ կայծակը հեռվում,
Աշխարհը լցվեց վարդագույն միգով,
Դարեր են անցնում վայրկյանի միջով:

Լևոն Մկրտչյանին նվիրված բանաստեղծությունը Սահյանը կառուցել է հակադարձ աստիճանավորման սկզբունքով.

Ինձ հաճախ այնպես էր թվում,
Թե կյանքս տանուլ եմ տվել,
Օրերս քամուն եմ տվել,

Սերերս տվել եմ ջրին…

Աստիճանավորումն այստեղ հակադարձ է, որովհետև «կյանք» հասկացությունից հետո «օրեր», «սերեր» բառերն ավելի նեղ, մասնավոր իմաստ են արտահայտում:

ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Էշը կռնակին փալան էր կրում,
Եվ պայտ էր կրում էշը սմբակին,
Էշը բեռան տակ էշորեն տխրում,
Քուռակին էր հիշում ցնծագին:

Այս քառյակում Սահյանը էշի այլաբանական պատկերը ստեղծել է՝ նկատի ունենալով մարդուն: Ընդհանրապես մարդը, հասնելով որոշակի տարիքի, կարոտով է հիշում իր մանկությունը, քանի որ կյանքի լավագույն շրջանը մնացել է ետևում, այն տպավորությունն է, ասես քաղցր մի բան ես կորցրել: Եվ այս զգացողությունը Սահյանը վերագրում է էշին, որն արդեն հասել է մեծ տարիքի /իսկ դրա նշաններն են կռնակին փալան կրելը և սմբակին պայտ կրելը/: Սահյանը պատկերում է էշի /մարդու/ տխրությունը և քաղցր հիշողությունները: Այս էշը անցել է աշխարհի երեսից, բայց մնացել է նրա էշությունը: Եվ Սահյանը բանաստեղծությանը կցել է խրատական փոքրիկ մի խոսք, որ ընդհանրապես հատուկ է առակներին.

Չքվել է իսպառ տոհմը իշային,
Աշխարհ չի գալու և ոչ մի անգամ,
Բայց էշությունը ապրում տակավին
Ու ոմանց կողմից պաշտվում է անգամ:

ՀՆՉՅՈՒՆԱԽԱՂ

Սահյանի հնչյունախաղերը կամ հնչյունական կրկնություններն ամենից առաջ հնչյունական զարդարանքներ են, որոնք շոյում են լսելիքը:

Առձայնույթը հիմնականում ունի խոսքը բարեհունչ, երաժշտական դարձնելու նպատակ.

Հարցում արի, ժպտաց, առուն անուն չուներ:

Անհուն ձորերի մեջ կարգին մի հուն չուներ:

Բաղաձայնույթը բարեհնչյունությունից բացի որևէ տրամադրության, հոգեվիճակի արտահայտություն է.

Ծածանվում է ծառն ի վար

Ծիածանի մի ծվեն…

ԵՐԳԻԾԱՆՔ

Կյանքում հանդիպում են մարդիկ, ովքեր էությամբ տխուր են, նրանց մոտ ուրախությունը և տխրությունն իրար հետ ընթացող երևույթներ են: Սահյանն այս էությունն ուներ: Եվ, որպես կանոն, այս էության տեր մարդու ստեղծագործությունն էլ է լինում այսպիսին: Երգիծանքի ասպարեզում Սահյանը մեծ նվաճումների չհասավ, բայց կարողացավ իր մի քանի (շատ սակավ) երգիծական գործերով իր ձեռքի զենքով՝ գրչով, ծաղրել իրեն դուր չեկող երևույթները:

Վահագն Դավթյանը, խոսելով Սահյանի էության մասին, չի անտեսում և նրա սրամիտ լինելը. <<Նա այն եզակիներից է, որ հումորն ու երգիծանքը ամենից առաջ իր վրա է կիրառում, բայց Աստված չանի, որ մարդ ընկնի Համոյի լեզվի տակ>>[9] :

Սահյանի ծաղրը սուր, դաժան չէ, այն ավելի շուտ կարելի է համարել բարի ծիծաղ, որն ուղղված է բոլորին՝ և՛ անարժան պոետներին, և՛ տգետ խմբագիրներին, և՛ նախանձ, կարծիք չունեցող, անտաղանդ մարդկանց:

<<Թեփավաճառը>> բանաստեղծության մեջ Սահյանը ծաղրում է մի բանաստեղծի, ով, գրագողությամբ զբաղվելով, մեծերից շատ բան խլելով, <<արժևորում>> է իրեն.

Չարենցի խախալի ծակից վեր ընկած մի ոսպ է գտել,

Խառնելով սեփական թեփին՝ եկել ու շուկա է մտել:

Երգիծանքի ասպարեզում Սահյանը նոր որակ չբերեց, նորություն չասաց, նա իր միակ դրական հերոսով՝ ծաղրով, շատերին կանգնեցրեց դատաստանի առաջ և հավաստեց մեծ երգիծաբան Լեռ Կամսարի խոսքը. <<Առանց ծիծաղի կյանք չկա>>:

ԳՈՒՅՆԻ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

<<Սպիտակին տվող կապույտ: Իմ ամենասիրելի գույնն է, շատ մեղմ գույն է, որ տարբերվում է ուրիշ ճչացող գույներից>>: /Համո Սահյան/

Թեև երկրաչափական գիտությունից հայտնի է, որ զուգահեռները երբեք չեն հատվում, բայց կյանքում լինում են զուգահեռներ, որոնք հատվում են, դառնում մի ամբողջություն: Արվեստի և գրականության մեջ այդօրինակ զուգահեռ է իրենից ներկայացնում Սահյան-Սարյան զույգը՝ գույնի, երանգի արքաներ, և այդ նվաճման համար երկուսն էլ պարտական են մայր բնությանը: Որպես փաստացի ապացույց՝ կարելի է բերել Սարյանի <<Ինքնադիմանկար. 3 հասակ>> և <<Տարիներս>>, <<Զրնգում էր կանաչ քամին>> բանաստեղծությունները.

Ճառագում էր ճերմակ քամին աչքն անհայտին առած,
Իմ ծերության ճերմակ երգը բերանացի արած:

Սահյանի մեջ ամբողջ կյանքում քնած են եղել բանաստեղծը և նկարիչը, և կախարդական փայտիկը արթնացրել է բանաստեղծ Սահյանին:

ԲՈՒՅՐԻ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Սահյան բանաստեղծի հոգում գոյնի զգացողության հետ միաժամանակ ապրում է և բույրի զգացողությունը.

Բույրերի բուք է ու գույների ճիչ…

Բուրում են սոնկը, քարը, արևը, ջուրը, հոտ է գալիս նույնիսկ թիթեռից ու ավերակից, լույսից ու կայծից: Արդեն դադարում ենք զարմանալ նաև այն պարագայում, երբ սկսում են բուրել բառն ու խոսքը.

Թավալվում էր երգը շաղոտ, ծաղկի բույրով թևահարում…

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՃԵՐ, ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Համո Սահյանը պոեզիա մտավ ժողովրդական տարերքից, ժողովրդական մտածողությամբ: Ժողովրդի ծոցից ելած բանաստեղծ և ժողովրդական

զգացողություն. Այս երկու երևույթներն ընթանում են կողք կողքի: Սահյանը ժողովրդական ակունքներից ելած բանաստեղծ է, ժողովրդական մտածողությունը խոր շերտեր ունի նրա պոեզիայում: Եվ այդ մտածողությունը նա արտահայտում է տարբեր միջոցներով: Սահյանն իր բանաստեղծության ոճը ավելի ու ավելի մերձեցնում է զրույցի, առօրյա սովորական խոսակցության, ժողովրդական պատումների ոճին: Նա բանաստեղծությունը պարզեցնում է ոչ թե անկազմակերպ բառային խաժամուժի, այլ բանահյուսական դրոշմի բառային կառուցվածքների ու ժողովրդական լեզվագանձերի հաշվին: Սահյանի պատկերավորման արվեստը զգալիորեն պայմանավորված է ժողովրդական լեզվամտածողությամբ: Սահյանի պոեզիան հարուստ է ժողովրդական մտածողության պատկերներով, դարձվածքներով, նույնիսկ կան բանաստեղծություններ, որոնք ամբողջովին ժողովրդական են: «Երգը» բանաստեղծության բնաբանը Սահյանը վերցրել է ժողովրդական երգից՝ «Կանաչ արտը հաց տարա», և ամբողջ բանաստեղծության մեջ տալիս է իր տպավորությունը.

Որքան պարզություն կա այս երգի մեջ,
Որքան մանկություն ու որքան թախիծ
Թվում է նորից կանաչ արտի մեջ
Արտույտն է թռչում ոտքերիս տակից:

Այնուհետև ամբողջ պոեզիան հագեցած է ժողովրդական դարձվածքներով, բառերով, տողերով: Ժողովրդական երանգավորման հիմքը մե՛կ բառապաշարն է (Գյազբելա սար, Որոտան, Դարբասի ձոր, Սալվարդա սար), մե՛կ ժողովրդական խաղիկների կառուցվածքն է՝ հանգավորման յուրահատուկ սկզբունքով և աշխարհազգացողությամբ, որ առանձնահատուկ տրամադրություն է հաղորդում խոսքին. «Թող աչքերիս լույսն էլ մարի» («Ապրեմ այսպես»), «Նեղանալը քարը գլխին» («Քնած տեղս»), «Թող հողը թեթև լինի քեզ վրա» («Թեթև լինի»), «Կակաչ» բանաստեղծությունն ամբողջովին.

Ասում են, թե հովը մի օր
Հարցմունք արավ կակաչին,
Դու ինչու՞ ես այդքան կարմիր
Այդ ի՞նչ սև է քո միջին: («Կակաչը»)

Համո Սահյանն իր պոեզիայով կարողացավ մտնել ժողովրդի կենսագրության մեջ, իր ստեղծագործությունը համեմեց ժողովրդական լեզվի գեղեցկությամբ, իր սփոփիչ և կենարար սնունդն առավ անցյալի մաքուր ոլորտներից: Սա է հենց

ժողովրդականության ամենամեծ երաշխիքը. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ - Սայաթ-Նովա - Թումանյան) և ոգեղեն (Նարեկացի – Շնորհալի – Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ: Ես ձգտել եմ այն բանին, որ այս երկու թևերն իմ մեջ ծուլվեն, խառնվեն իրար: Ես ձգտել եմ ժողովրդական – ֆոլկլորային մտածողությունը դնել դնել մյուս ձևերի մեջ: Բայց համենայնդեպս պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել (Ասվել է Հրանտ Մաթևոսյանի հետ ունեցած զրույցի ժամանակ, որը ցուցադրվել է Հանրային հեռուստատեսությամբ):

Համո Սահյանը Հակոբ Մովսեսի հետ ունեցած հարցազրույցում հիշում է տարիներ առաջ կատարած իր թարգմանությունը. թարգմանել էր իսպանացի բանաստեղծ Լորկային: Եվ ի՞նչն էր Լորկայի մեջ գրավել իրեն, այն, որ Լորկայի բանաստեղծությունները կարդալիս Սահյանն այն զգացողությունն ուներ, թե կարդում է «Ալագյազի մանիները», այսինքն՝ ինչպես Իսահակյանը, Լորկան ևս ժողովրդի հոգեբանության և բանահյուսության հետ կապված է սերտ կապով: Եվ Սահյանը խոստովանում է, որ չնայած Պաստեռնակն էլ է նույն մեծության բանաստեղծ, բայց նրան ինքը սիրով չէր կարողանա թարգմանել, որովհետև Պաստեռնակն իրեն չի տաքացնում, ջերմացնում, նրա մեջ պակասում է ժողովուրդը: Իսկ Լորկայի բանաստեղծությունները կարդալիս Սահյանն ընկնում էր հայրենի այն ոլորտները, ուր իրեն ազատ էր զգում:

Սահյանի ժողովրդական մտածողությունը ձևավորվում է նաև այսպես կոչված թվերի պոեզիայով: Դեռ վաղ ժամանակներից թվին տրվել է բացառիկ նշանակություն, ժողովրդական բանահյուսության և առասպելաբանության մեջ մտել է «թվերի մոգություն» հասկացությունը: Եվ Սահյանի մոտ դա ոչ թե թվահմայություն է, այլ թվի ժողովրդական հավատք: Սահյանի պոեզիայում թիվն ունի բառին, պատկերին հավասարազոր նշանակություն: Չէ՞ որ թվերը հայերի մոտ ունեցել են խորհրդավոր իմաստներ, հայերն իրենց նախապաշարումները կապել են նաև թվերի հետ: Համո Սահյանն իր պոեզիայում օգտագործել է հիմնականում հազար, յոթ և չորս թվականները: Շատ է հազար թվի գործածությունը տարբեր բանաստեղծություններում.

Մենակությունս… մենակ մնալու ժամանակ չունի,
Հազար կապերով կապված է հազար մենակության հետ:

(«Ուղեկիցներս»)

Ապրեմ այսպես հազար տարի,
Բախվեմ հազար ժայռ ու քարի,
Շնչեմ հազար հողմ ու քամի
Եվ ամրանամ, և ամրանամ:
(«Ապրեմ այսպես»)

Երազիս մեջ քեզ խղճացի հազար անգամ,
Հազար անգամ քեզ ներեցի երազիս մեջ:
(«Երազիս մեջ»)

Յոթ թվի գործածությունը ևս շատ է հանդիպում Սահյանի պոեզիայում: Հայտնի է այն փաստը, որ յոթը կոչում են «բիբլիական թիվ», իսկ հայ ժողովրդի համար այն սուրբ թիվ է: Յոթը համարվում է կույս թիվ, որովհետև անտրոհելի է, չի բաժանվում, անսահման է: Եվ պատահական չէ, որ յոթ թվին համապատասխանում է է (Աստված) տառը:

Ես հարուստ էի: Ես կարող էի
Իմ անհատնելի երազանքներով
Գնել յոթ երկինք ու տալ քեզ նվեր:
(«Ես հարուստ էի»)

Թեկուզ յոթ քայլ է մեր արանքում,
Բայց անջատված ենք յոթ աշխարհով:
(«Անջատումի երգ»)

Սահյանի ժողովրդական մտածողության շերտերից մեկն էլ կարող են համարվել նրա ստեղծած հայրենները, որոնց մեջ ապրում է նորից ժողովուրդը, ժողովրդականը: Այսինքն՝ ժանրային առումով ևս Սահյանը դիմում է ժողովրդական բանահյուսությանը: Թեև հայրենը հայ բանաստեղծութան միջնադարյան ձևն է, այնուամենայնիվ Սահյանը կարողացավ այդ ձևը նորացնել և համեմել ժողովրդական շնչով.

Մի հայրեն ասեմ ես էլ,
Իմ ապրած օրերին ասեմ:
Օրհնանքս՝ անցավորաց
Մաղթանքս նորերին ասեմ:
Շահածս տամ հովերին,
Կորածս ծովերին ասեմ:

Թագավորն ապրած կենա,
Աստվածս ցորենին ասեմ:

Սահյանը ժողովրդական բանաստեղծ է՝ իր կենսագրությամբ և ստեղծագործությամբ: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է Սահյանը Հրանտ Մաթևոսյանի հետ ունեցած հարցազրույցում: Հրանտ Մաթևոսյանի այն հարցին, թե Սահակի, Լորի, Սիսական աշխարհի որդին է, թե՞ պոեզիայի, ասենք՝ Թումանյանի, Տերյանի, համաշխարհային պոեզիայի առհասարակ, Համո Սահյանը պատասխանում է սահյանավարի. «Ես դա չեմ, ես էն եմ, Սահակի, Լորի, խոտի, քարի, հայոց լեզվի, բնության տղան, քան թե գրականության: Շատ սիրելով գրականությունը, դրան նվիրվելով հանդերձ՝ էլի ես էնտեղ եմ: Գրականությունը ինձ միշտ օգնում է ինձ բացելու համար, ինձ հասկանալու և իմ միջավայրը հասկանալու համար»:

Ժողովրդական խոսքն աչքի է ընկնում աշխուժությամբ, կենդանությամբ, անմիջականությամբ, և դրան մեծապես նպաստում են այսպես կոչված դիմումները: Սահյանի դիմումները հիմնականում անհասցե են, ուղղված չեն ինչ-որ մեկին.

Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք, էլի, ես մի քիչ բարդ եմ:

Չէ, ժամանակն է կարծես,
Ինձ բաց թողեք, ես գնամ:

Երբեմն էլ Սահյանի դիմումներն ուղղված են լինում հասցեատիրոջը.

Սիրտ իմ, արի էլ չկռվենք,
էլ չլինենք մանր ու թեթև:

Երգ իմ, նման ես քո ստեղծողին,
Նրա պես նոր ես, նրա պես հին:

Վերջաբան

Ինձ կհիշեն ամեն անգամ,
Երբ ամպը թաղքի,
Եվ քարափի թամբից կախված
Մասրենին ծաղկի:
Ինձ կհիշեն ամեն անգամ,
Երբ մտնեն անտառ,
Լսեն խելոք կաղնիների
Հեքիաթներն անբառ…

Պատկերավորությունը տեխնիկայի խնդիր չէ սոսկ, դա աշխարհի գեղարվեստական յուրացման ձև է, հեղինակային աշխարհայացքի դրսևորման միջոց: Պատկերավորությունը գեղարվեստական գրականության բնորոշ, տարբերակիչ հատկությունն է, քանի որ գրողն ասելիքը հաղորդում է պատկերների միջոցով: Պատկերավորությունը գեղարվեստական խոսքի էությունն է, որ պայմանավորվում է նրա բնույթով: Գրականությունը սոսկ ինֆորմացիա չէ, այն ազդում է ընթերցողի զգացմունքների, երևակայության վրա, ծնում է հույզեր, ապրումներ, ստեղծում է տրամադրություն:

Սահյանի պատկերներն այնքան տպավորիչ են, որ մեր գիտակցության մեջ դրանք ձուլվում են բնության մեր ընկալմանը և ստիպում բանաստեղծի աչքերով նայել նրան: Նաև սրա մեջ է Սահյանի թողած ավանդի արժեքը:

Համո Սահյանը ֆիզիկապես այլևս գոյություն չունի, բայց նրա պոեզիայի ոգին ապրում և թևածում է՝ հաստատելով, որ Սահյան բանաստեղծի ստեղծագործությունը չի մեռնի, հավերժ է: Համո Սահյանն ունեցավ իր անկրկնելի տեղն ու դերը հայ պոեզիայում, նրա ստեղծագործությունը դարձավ մեր դարավոր պոեզիայի ինքնակա ու հետաքրքիր երևույթներից մեկը, որն իրավունք ունի մտնելու հայ դարավոր պոեզիայի գանձարանը: Եվ Սահյանի նպատակն է եղել նույնիսկ մահից հետո էլ իր աճյունի միջոցով օգտակար լինել պաշտելի բնությանը.

Աճյունս տարեք մի հեռու, անշուք գերեզմանատուն
Եվ մի անտաշ քար դրեք իմ հողին…
Որ սիրահարված մողեսներն արթուն
Արևկող անեն այդ քարի կողին:

Տաքանան, զգվեն, համբուրեն իրար,
Մի բան հասկանան աշխարհի բանից
Ու երբ հեռանան գոհացած, ուրախ,
Իրենց մտքի մեջ ողորմի տան ինձ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐԻՍՏՈՏԵԼ – Պոետիկա
2. ՍԱՀՅԱՆ Հ. – Երկեր 2 հատորով, Սով. գրող, Երևան, 1984 թ.
3. ԴԱՎԹՅԱՆ Վ. - <<Ի սկզբանե էր բանն>>, Եր., Խորհրդային գրող, 1989 թ.
4. ՄԿՐՏՉՅԱՆ Լ. - <<Զրույցներ բանաստեղծի հետ>>
5. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - <<Գեղարվեստական խոսք, Եր. Սովետ. գ., 1986 թ.
6. ԾԱՌՈՒԿՅԱՆ Ա. - <<Իրավ բանաստեղծը>> /հոդվածների ժողովածու, Եր 1980 թ.
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Շ. - <<Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ>>, Եր. 1970
8. ՊԱՊՈՅԱՆ - <<Համո Սահյանի լեզվական արվեստի հարցեր>>
9. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ - <<Պոեզիան կօգնի մարդուն>> հոդված
10. ԳԱՐՈՒՆ, համար 9, 1984թ. էջ 43, <<Բանաստեղծությունը ծնվում է ցավից>>
11. ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ, 1959 թ. համար 7, Գ. Մահարի, <<Գրական նամականի>>

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքում ուսումնասիրվում է Համո Սահյանի պոեզիայի պատկերավորման արվեստը: Արվեստ, առանց որի չի կարող շնչել պոեզիան: Արվեստ, որի շնորհիվ հարստանում է ընթերցողի աշխարհայացքը: Իրավամբ, Սահյանին կարելի է համարել պատկերավորման արվեստի մեծագույն վարպետ: Նա տողի, հանգի, բառի նկատմամբ հոգատար վերաբերմունք ունի: Նրա խոսքարվեստը բացառիկ հարուստ է: Հետազոտական աշխատանքի նպատակն է աշակերտներին ներկայացնել Սահյանի կիրառած պատկերավորման բոլոր միջոցներն իրենց նրբերանգներով:

Հետազոտական աշխատանքի արդյունքում երիցս համոզվում ենք, որ պատկերավորման արվեստը պոեզիայի զարդն է:

Բանալի բառեր. մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափազանցություն, նվազաբերություն, հակադրություն, հնչյունախաղ, երգիծանք, բույրի զգացողություն, գույնի զգացողություն:

ИСКУССТВО ИЛЛЮСТРАЦИИ В ПОЭЗИИ АМО САГЯНА

РЕЗЮМЕ

В статье исследуется искусство изображения стихов Амо Сагяна. Искусство, без которого поэзия не дышит. Искусство, обогащающее мировоззрение читателя. Действительно, Сагяана можно считать величайшим мастером искусства иллюстрации . Он бережно относится к строчке, рифме, слову. Его речь исключительно насыщенна. Цель исследования – познакомить учеников со всеми средствами иллюстрации, используемыми Сагяном в их нюансах. В результате исследования мы трижды убеждаемся, что искусство иллюстрации украшение поэзии.

Ключевые слова: Эпитет, сравнение, метафора, персонификация, преувеличение, уменьшение, контраст, звуковая игра, сатира, обоняние, чувство цвета.

THE ART OF ILLUSTRATION IN HAMO SAHYAN'S POETRY

SUMARY

The article studies the art of depicting Hamo Sahyan's poetry. Art without which poetry cannot breathe. An art that enriches the reader's worldview. Indeed, Sahyan can be considered the greatest master of the art of illustration. He has a caring attitude towards line, rhyme, word. His speech is exceptionally rich. The purpose of the study is to introduce the students to all the means of depiction used by Sahyan in their nuances. As a result of the study, we are thrice convinced that the art of illustration is the ornament of poetry.

Key words: Epithet, comparison, metaphor, personification, exaggeration, diminution, contrast, sound play, satire, sense of smell, sense of colour.